# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

## Ն Ա Խ Ա Գ Ա Հ

## Հ Ր Ա Մ Ա Ն

«28» ապրիլի 2026թ. N 61-Ա

### ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ԿՐԵԴԻՏՆԵՐԻ ՄԵՐԺՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքաշինության մասին» օրենքի 10.1-ին հոդվածի 3-րդ մասի 31-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 748-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2023 թվականի օգոստոսի 23-ի N 06-Ն հրամանի N 1 հավելվածի 5-րդ կետի 2-րդ ենթակետի ա, զ, ը, թ պարբերությունները և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի կողմից ստեղծված որակավորման հանձնաժողովի 2026 թվականի ապրիլի 8-ի նիստի N 5 արձանագրությունը

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝**

1. Մերժել «Ինստրուկտարիում» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից 2026 թվականի մարտի 20-ին, 25-ին և 26-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտե ներկայացված քաղաքաշինության բնագավառում «Արհեստական բանականության կիրառման հնարավորությունները քաղաքաշինության բնագավառում», «PM գործիքները քաղաքաշինության բնագավառում», «Շենքերի էներգաարդյունավետություն. հիմունքներ», «Շենքերի էներգաարդյունավետություն. հիմունքներից դեպի կիրառական լուծումներ» անվանումներով միջոցառման ծրագրերը:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում այն ընդունելու մասին միջոցառման կազմակերպչին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

4/28/2026

X

ԵՂԻԱԶԱՐ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Signed by: VARDANYAN YEGHIAZAR 2614790133

Ե. ՎԱՐԴԱՆՅԱՆ